ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 06

գյուղ Սարալանջ

17 մարտի 2018 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 14-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը:

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի կամավոր խնդիրները դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքում նոր կառուցվող /վերակառուցվող, վերանորոգվող / շենքերի և շինությունների տանիքների նախընտրելի գունային լուծումները սահմանելու մասին:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը սահմանելու մասին:

4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն ցույց տալու մասին:

(Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավար՝ Ցոլակ Հովհաննիսյան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հովսեփյան Ահարոն՝ կողմ ----------

Մինասյան Մկրտիչ՝ կողմ ----------

Պապոյան Կարեն՝ կողմ ----------

Հարոյան Սամվել՝ կողմ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՑՈԼԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

17 մարտի 2018 թվական
գյուղ Սարալանջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7-Ն

17 մարտի 2018 թվական Սարալանջ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանին

Որոշում է

Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հովսեփյան Ահարոն՝ կողմ ----------

Մինասյան Մկրտիչ կողմ ----------

Պապոյան Կարեն կողմ ----------

Հարոյան Սամվել կողմ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՑՈԼԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

14 մարտի 2018 թվական
գյուղ Սարալանջ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Սարալանջ համայնքի ավագանու
2018 թվականի մարտի 17 -ի թիվ 7-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍԵՓԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և իրականացման կարգը և այդ նպատակով անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Ըստ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքն իրականացնում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով թվարկված և Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով վերապահված կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունները:

3. Յուրաքանչյուր տարի կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման համար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավարին կարող է նախատեսվել հատկացնել ֆինանսական միջոցներ, որը չի կարող գերազանցել այդ տարվա համայնքի բյուջեով նախատեսված սեփական եկամուտների 10%-ը:

4. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման համար պահանջվում է ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման չափերի մասին ավագանու որոշումների դեպքերում:

5. Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման համար չի պահանջվում ֆինանսական միջոցների հատկացում՝ համայնքի ղեկավարը դրանք իրականացնում է ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ:

6. Կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման համար առաջարկություն կարող են նախաձեռնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանու անդամները, բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ:

7. Այն դեպքում, երբ համայնքի կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացումը նախաձեռնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավարը կամ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանու անդամը, նախաձեռնողը համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացնում կամավոր խնդիրների, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման վերաբերյալ առաջարկությունը՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

8. Այն դեպքում, երբ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացումը նախաձեռնում են բնակիչները, հասարակական կազմակերպությունները և միավորումները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտները, նախաձեռնողը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավարին է ներկայացնում կամավոր խնդիրների, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման վերաբերյալ դիմում՝ նշելով օրենսդրությամբ նախատեսված լիազորության տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը, անհրաժեշտության հիմնավորումը և դրա պատճառը, անհրաժեշտության հիմնավորումը հավաստող փաստաթղթեր, եթե դրանք առկա են:

9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավարը դիմումը և սույն կարգի 8-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո՝

1) կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացմանը համաձայնվելու դեպքում՝ մեկամսյա ժամկետում ճշտում է դրանց արժանահավատությունը, հաշվարկում կամավոր խնդիրների իրականացման համար գումարի մեծությունը և իր կարծիքը, ինչպես նաև կամավոր խնդիրների իրականացման վերաբերյալ նախաձեռնողի ներկայացրած փաստաթղթերը և ավագանու որոշման նախագիծը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանու քննարկմանը և այդ մասին տեղեկացնում է նախաձեռնողին.

2) կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացմանը չհամաձայնելու դեպքում նախաձեռնողին՝ գրավոր տեղեկացնում է այդ մասին՝ նշելով չհամաձայնելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

10. Եթե կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նախաձեռնողը սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավարից չի ստանում կամավոր լիազորության իրականացմանը չհամաձայնելու մասին գրավոր պատասխան կամ իր փաստաթղթերը համայնքի ավագանուն ուղարկելու վերաբերյալ գրություն կամ եթե նախաձեռնողը համաձայն չէ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու մասին հիմնավորումներին, ապա 20-օրյա ժամկետում համայնքի ղեկավարին ներկայացված դիմումի կրկնօրինակը՝ սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերի հետ միասին, իսկ կամավոր լիազորության իրականացմանը համայնքի ղեկավարի չհամաձայնելու վերաբերյալ գրավոր պատասխանի առկայության դեպքում՝ այդ պատասխանի վերաբերյալ իր առարկությունները և ավագանուն ուղղված դիմումը ներկայացնում է վերջինիս քննարկմանը:

11. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանին սույն կարգի 8-րդ կամ 10-րդ կետերում նշված անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց, ինչպես նաև իր նախաձեռնությամբ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հարցը քննարկելուց հետո ընդունում է որոշում կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման համաձայնություն տալու կամ մերժելու վերաբերյալ:

12. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են՝ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման տեսակը, դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցի չափը և անհրաժեշտության հիմնավորումը, իսկ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացումը մերժելու դեպքում մերժելու պատճառները, փաստական և իրավական հիմքերը:

13. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավարը զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման,

զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով՝ իր որոշմամբ հասարակական հիմունքներով կազմում է մշտական գործող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանու անդամները, հասարակական կազմակերպությունների և միավորումների ներկայացուցիչները, աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների մասնագետները, ինչպես նաև համայնքի բնակիչները և այլ շահագրգիռ անձինք, եթե նրանք այդ մասին նախապես տվել են իրենց համաձայնությունը:

14. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքին վերապահված այլ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացմանը համար համայնքի ղեկավարը կարող է կազմել մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ:

15. Զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանու կողմից քննարկվում են միայն մշտական գործող հանձնաժողովի կողմից կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման եզրակացության և անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության հիմնավորման առկայության դեպքում:

16. Սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացվող մեկանգամյա սոցիալական օգնության առավելագույն չափը սահմանվում է 100.000 Հայաստանի Հանրապետության /հարյուր հազար/ դրամ: Նույն ընտանիքին տարվա ընթացքում սոցիալական օգնության կարող է հատկացվել առավելագույնը 2 անգամ, որի չափը չի կարող գերազանցել 50.000 Հայաստանի Հանրապետության /հիսուն հազար/ դրամը: Արգելվում է սոցիալական օգնության հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին և համայնքի ղեկավարի մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա):

17. Սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողներին ուսման վարձի հատկացումը կարող է իրականացվել միայն պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու դեպքում և առավելագույնը կարող է հատկացվել տարեկան 2 անգամ՝ տարեկան ուսման վարձի 30%-ի չափով: Արգելվում է ուսման վարձի հատկացումը համայնքի բնակիչ չհանդիսացող, ինչպես նաև համայնքի բյուջեի նկատմամբ հարկային պարտականությունները չկատարած անձանց, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավարի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների ընտանիքի անդամներին, մերձավոր բարեկամներին (ծնող, քույր, եղբայր, երեխա), եթե վերջիններս վարում են համատեղ տնտեսություն:

18. Հաշվետու տարվա ընթացքում կամավոր լիազորությունների ընդհանուր գումարի սահմաններում մի կամավոր լիազորության իրականացման նպատակով հատկացված գումարը կարող է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանու որոշմամբ ուղղվել մեկ կամ մի քանի այլ կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման համար՝ ելնելով տարվա ընթացքում իրադրության փոփոխություններից:

19. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանու կողմից սույն կարգով չնախատեսված կարգով կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացումն արգելվում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՑՈԼԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 08

17 մարտի 2018 թվական գյուղ Սարալանջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ /ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ, ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՂ/ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԳՈՒՆԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքում նոր կառուցվող /վերակառուցվող, վերանորոգվող/ շենքերի և շենքերի ճակատների արաքին տարրերին ներկայացվող ճարտարապետական գունային տեսք սահմանել շինանյութ քար <<Արթիկ տուֆ> վարդագույն, իսկ տանիքների համար մետաղաթիթեղներ, պրոֆիլներ՝ 148-54-52-3001 և 99-36-35-3013:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հովսեփյան Ահարոն՝ կողմ ----------

Մինասյան Մկրտիչ՝ կողմ ----------

Պապոյան Կարեն՝ կողմ ----------

Հարոյան Սամվել՝ կողմ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՑՈԼԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

17 մարտի 2018 թվական
գյուղ Սարալանջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 9-Ն

17 մարտի 2018թվական գյուղ Սարալանջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետի դրույթով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հովսեփյան Ահարոն՝ կողմ ----------

Մինասյան Մկրտիչ կողմ ----------

Պապոյան Կարեն կողմ ----------

Հարոյան Սամվել կողմ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՑՈԼԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

17 մարտի 2018 թվական
գյուղ Սարալանջ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Սարալանջ համայնքի ավագանու
2018 թվականի մարտի 17-ի թիվ 9-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էությունը, ծավալը, պայմանները և իրականացումը (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերը և տարածքները:

4. Սույն կարգի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի վարչական սահմաններում տեղակայված (գտնվող)՝

1) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) այգիներում, պուրակներում և ընդհանուր օգտագործման այլ տարածքներում գտնվող սրճարանների, բարերի, ռեստորանների և զվարճանքի այլ օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

3) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման, այդ թվում՝ լվացման, և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար մաքրման, բարեկարգման (սալիկապատման կամ ասֆալտապատման) աշխատանքները և մաքրության պահպանումը.

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը.

3) անհրաժեշտ լուսավորություն՝ անշարժ գույքի մուտքի համար.

4) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների պարբերաբար մաքրումը և կանաչապատում.

5) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում.

6) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջի համայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրային նշանակության օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

7. Շինարարության թույլտվություն պահանջող և չպահանջող բարեկարգման աշխատանքների ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշմամբ:

8. Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար անշարժ գույքի սեփականատերերի և տիրապետողների կողմից կարող են կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին արձանագրություն:

9. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով՝ համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ միայն կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում.

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում.

3) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

10. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի ղեկավարի (կամ նրա կողմից լիազորված անձի) կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ-սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջի համայնքապետարանի կողմից:

11. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և նորոգումն իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Ընդ որում՝ պետական լիազոր մարմնի կողմից կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջի համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

12 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջի համայնքապետարանի կողմից Կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների վերականգնման կամ նորոգման աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

13. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, բնակչության կենցաղային սպասարկման և այլ

նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով և շահագործվեն սահմանված պահանջներին համապատասխան.

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ թվաքանակով աղբարկղերի առկայությունը, ընդ որում՝ մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08.00-ից մինչև 09.00-ն և երեկոյան ժամը 18.00-ից մինչև 19.00-ն.

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11.00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21.00-ին և դրանից հետո.

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտբետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից.

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել ճանապարհի երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում, կամ ճամփեզրին.

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձնից և սառույցից:

14 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

15. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջի համայնքապետարանի կողմից տրամադրված ֆիտոնախագծի համաձայն:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջի համայնքապետարանի հետ:

17. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը Կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

18. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա դրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

19. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

20. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, բնակչության կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ինչպես նաև առևտրի այլ օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի

մասի եզրաքարը,

2) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) ավտոկանգառների և ավտոկայանատեղերի համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից 10-50 մետր (կախված օբյեկտի տարողականությունից և հզորությունից),

4) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ հատկացված և (կամ) զբաղեցված ամբողջ տարածքի պարագծից առնվազն 10 մետր՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

21. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված պատասխանատվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՑՈԼԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 10

16 մարտի 2018թ. գյուղ Սարալանջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-ին մասի 3-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջ համայնքի կամավոր խնդիրների լուծմանն ուղղված սեփական լիազորությունների և իրականացման կարգի 15-րդ կետի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջի համայնքի 2018 թվականի բյուջեի 4729 հոդվածի այլ սոցիալական ծրագրերի բաժնից կատարել հատկացում ընդամենը 90.000 / իննսուն հազար/ դրամ՝ համայնքի անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու նպատակով՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ-4 Դեմ-0 Ձեռնպահ-0

Հովսեփյան Ահարոն՝ կողմ ----------

Մինասյան Մկրտիչ կողմ ----------

Պապոյան Կարեն կողմ ----------

Հարոյան Սամվել կողմ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՑՈԼԱԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

17 մարտի 2018 թվական
գյուղ Սարալանջ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Սարալանջի համայնքի ավագանու
2018թվականի մարտի 17-ի թիվ 10 որոշման

ՑՈՒՑԱԿ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարալանջի համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնության տրամադրման:

1.Հովհաննիսյան Նելլի Շավարշի– 25.000 /քսան հինգ հազար/ դրամ

2.Մինասյան Ռուզան Լիովնիկի-25.000/քսան հինգ հազար/ դրամ

3.Գրիգորյան Անահիտ Արամայիսի -40.000/քառասուն հազար/ դրամ

Ընդամենը՝ 90.000 / իննսուն հազար/ դրամ

Սարալանջի համայնքի ղեկավար՝ Ց.Հովհաննիսյան

Գ. Սարալանջ

17 մարտի 2018 թվական